
«ՎԱՆԱԶՈՐՑԵՄԵՆՏ»


սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Վանաձորում նախատեսվող ցեմենտի
գործարանի

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ

 Վ. Թևոսյան



2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	4
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
2.1. Ազգային իրավական ակտեր.....	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	8
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	8
3.2 Կլիմայական պայմանները.....	11
3.3. Օդային ավազան.....	14
3.4. Ջրային ռեսուրսներ.....	16
3.5. Հողածածկ.....	19
3.6. Կենսաբազմազանություն	20
3.7. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ ..	21
3.8. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ	22
3. Սոցիալական պայմանները.....	23
3.9.1. Վանաձոր	23
3.9.2. Գյուղ Դարպաս.....	24
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
4.1. Ընդհանուր տեղեկատվություն	25
4.2. Հումքը	25
4.3. Արտադրանք	26
4.4. Արտադրության կառուցվածքը	26
4.5. Տեխնոլոգիական գործընթացները.....	29
4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ	31
5.1. Զրոյական տարբերակ	31
5.2. Քննարկվող տարբերակներ.....	32
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	33
6.1. Օդային ավազան	33
6.1.2. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները.....	37
6.1.3. Սանիտարապաշտպանիչ գոտի	37
6.2. Ջրային ռեսուրսներ	37
6.3. Թափոններ.....	38
6.4. Աղմուկ և վիբրացիա	39
6.5. Առողջապահական գործոնների վերլուծությունը.....	39

6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն.....	40
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	40
8. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	42
9. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 44	
9.1. Ռիսկերի գնահատում.....	44
9.2. Մթնոլորտային օդ.....	44
9.3. Ջրային ռեսուրսներ.....	45
9.4. Հողային ռեսուրսներ	45
9.5. Թափոնների կառավարում	45
9.6. Աղմուկ	46
9.7. Աշխատանքի անվտանգություն.....	46
10. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ /ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ ԾՐԱԳԻՐ	47
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	48
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ	58

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկողի անվանումը՝

«ՎԱՆԱԶՈՐՅԵՄԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Տնօրեն՝ Արեն Աբովյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բանակի փող., տ. 24:

Ձեռնարկողի գործունեության վայրը՝

Իրավաբանական հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փող., շ. 25/1:

Գործունեության հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Գործարանային փողոց 3 արտադրական բազա:

Տարածքը վարձակալությամբ է, որի անշարժ գույքի պետական գրանցման վկայականը (N 19042023-06-0044) և վարձակալության պայմանագիրը կցվում են հայտին:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1. Ազգային իրավական ակտեր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (21.06.2014թ.), վերջին փոփոխությունը ընդունվել է 2023թ.

- Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.): Սույն օրենքը կարգավորում է՝

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«ՀՀ ջրային օրենսգիրք»

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և

Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011 թ. N 75 - Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

«ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք»

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

«ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենք»

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000 թ.):

«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք»

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

«Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա

թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108–Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,
- ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
- 11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում

թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆՆ 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

ՀՀ Կառավարության թիվ 64-Ն որոշում - «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին»

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Վանաձոր վարչական տարածքում, Երևան-Վանաձոր մայրուղու Վանաձոր քաղաքի հյուսիս-արևմտյան մասում, Դարպաս գյուղից 690 մ, Փամբակ գետից 100մ հեռավորության վրա:

Վանաձոր քաղաքը աշխարհագրական դիրքի առումով տեղակայված է Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև ընկած նեղ ու երկարավուն գոգավորությունում՝ Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում՝ հյուսիսային լայնության 40° 48' 46" և արևելյան երկայնության 44° 29' 18" միջև¹: Քաղաքի զբաղեցրած մակերեսի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է ավելի քան 1353 մետր:

Երկրաբանական տեսանկյունից տարածքը կազմավորվել է մեզոզոյան և մինչքեմբրյան հրաբխային գործունեության ժամանակաշրջաններում: Հիմնականում տարածված են կրաքարերը և մերգելները:

Տարածաշրջանում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը՝ գերակշռող են 26-30° թեքության լանջերը:

Լանջերի մինչև 10° թեքությունների վրա գտնվում է տարածքի 6,7%-ը, 11-20°– 14,5%-ը, 21-30°-45,3%-ը, իսկ տարածքի 33,5%-ը գտնվում է 30°-ից բարձր թեքությունների վրա:

Հայցվող տարածքը եզրագծվում է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով՝

¹ <https://hy.wikipedia.org/>

1. 8450478.6381	4523774.8749
2. 8450525.2690	4523777.5038
3. 8450597.5611	4523782.0589
4. 8450671.3621	4523767.4837
5. 8450761.2774	4523738.7533
6. 8450776.5876	4523733.6653
7. 8450808.6410	4523723.3131
8. 8450891.5240	4523695.9120
9. 8450915.8437	4523755.7044
10. 8450836.7354	4523800.0733
11. 8450776.6525	4523821.7266
12. 8450662.4369	4523869.3702
13. 8450532.2018	4523930.7475



Նկար 1. Քարտեզ սխեմա

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից Վանաձոր քաղաքը համարվում է ամենաբարձր սեյսմոակտիվ գոտիներից մեկը: Տարածքի սեյսմոտեկտոնական պայմանները բավականին բարդ են, ինչը պայմանավորված է այստեղով անցնող Փամբակ-Սևանի ակտիվ բեկվածքով և նրա ճյուղավորումներով:

Վանաձոր քաղաքի համար լուրջ բնական վտանգ են ներկայացնում լայնատարած խոշոր սողանքները:

Գրունտային ջրեր

Աշխատանքների տեղանքում գրունտային/ստորգետնյա ջրերի մակարդակը կազմում է 2 – 6 մ:

ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.5g հորիզոնական արագացման արժեքը:

3.2 Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Վանաձորի կլիման մեղմ է, բարեխառն: Ձմեռները չափավոր ցուրտ են, աշունները՝ անձրևային, ամառվա ամիսները չափավոր շոգ:

Լեռնագրությամբ պայմանավորված՝ մթնոլորտային տեղումները հիմնականում ենթարկվում են արևմուտքից և արևելքից մուտք գործող օդային զանգվածների շարժման օրինաչափությանը:

Տեղումների միջին քանակը 694-673 մմ է, տարվա միջին ջերմաստիճանը՝ 7.8°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -30°C, առավելագույնը՝ +36°C: Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը 24մմ:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Վանաձորի օդերևութաբանական կայանի տվյալների:

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 3.1 – 3.4 աղյուսակներում:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ձովի մակար- դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Վանաձոր	1376	-3.1	-2.0	1.7	7.6	12.1	15.1	18.0	17.9	14.4	9.0	3.8	-0.8	7.8	-30	36

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ձովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Վանաձոր	1376	70	71	72	69	74	75	75	74	73	73	73	71	73	59	56

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Վանաձոր	17	25	36	62	95	92	56	41	34	45	35	19	557	24	60
	42	26	47	38	46	61	53	40	36	40	32	31	61		

Աղյուսակ 3.4. Քանու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Սահմաններ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (Պ 15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Վանաձոր	862,4	Հունվար	4	3	10	7	4	13	49	10	20	3.1	2.2	13	22	24	25
			1.5	1.7	1.5	2.0	2.2	3.8	4.0	2.4							
		Ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	23	2.3					
			1.5	1.9	1.6	2.2	1.3	2.7	2.3	1.2							
		Հուլիս	10	17	43	21	2	1	3	3	22	1.9					
			1.9	1.9	1.8	2.1	1.6	1.8	1.7	1.5							
		Հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	37	1.6					
			1.3	1.3	1.3	1.7	1.4	1.8	1.9	1.3							

3.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Վանաձոր քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան: 2022 թվականին Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան աննշան գերազանցել է ՄԹԿ-ն (0.1538մգ/մ³ , ՄԹԿ=0.15մգ/մ³), իսկ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 36%-ում դիտվել է փոշու, 12%-ում՝ ծծմբի երկօքսիդի գերազանցում համապատասխան ՄԹԿ-ներից: Նախորդ տարվա համեմատությամբ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է 48%-ով, փոշու կոնցենտրացիան՝ 6%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ աճել 18%-ով: 2022թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.18 է (փոշի՝ 1.03, ծծմբի երկօքսիդ՝ 0.08, ազոտի երկօքսիդ՝ 0.08): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների նվազման տենդենց: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրը արդյունաբերությունը և տրանսպորտային միջոցներն են²:

² <http://www.armmonitoring.am/>

Անմիջապես ներկայացվող տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը որոշելու համար 2023 թվականի հունիսի 12-ից հունիսի 20-ը կատարվել է նմուշառում՝ պասիվ նմուշառիչներով, որոնք տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա և կատարվել է լաբորատոր անալիզ:

Ըստ այդմ.

NO₂ – 0.0063 մգ/մ³

SO₂ – 0.0402 մգ/մ³:

Անալիզների վերաբերյալ հաշվետվությունը բերված է սույն հաշվետվության հավելվածների մասում:

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:


ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք


Վանաձոր քաղաքի հիմնական ջրային ռեսուրսը՝ Փամբակ գետն է: Համաձայն ՀՀ տարածքում 2022թ.-ին մակերևութային ջրերի որակի ամփոփագրի Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախության չոր նյութերով: Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով: Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը Փամբակ գետից կազմում է մոտավորապես 100մ:



Գծապատկեր 1. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Նկար 4.

3.5. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային և լեռնային մարգագետնային հողերի տիպերը:

Հյուսիսային կողմնադրության լանջերին ձևավորված լեռնային մուգ շագանակավուն հողերը բավականաչափ հզոր են, իսկ հարավային կողմնադրության լանջերում գերիշխում են բաց գորշավուն հողերը, որոնք բնորոշ են կաղնու և կաղնուտ-բոխուտային տարբեր տիպի ծառուտներին:

Լեռնային (անտառային) դարչնագույն հողերը հանդիպում են մինչև 1700մ բարձրությունների վրա, որոնցում զարգացած են բոխու, կաղնու, թխկու անտառային զանգվածները:

Անտառային գորշ հողերը հիմնականում հանդիպում են 1400-2000մ բարձրության՝ չափավոր տաք և խոնավ կլիմայի, լվացվող ջրային ռեժիմի և բոխու, կաղնու, հաճարենու ծառատեսակների ծածկոցի պայմաններում, իսկ լեռնամարգագետնային հողերը հիմնականում զբաղեցնում են 2000մ և բարձր տարածքները:

Անմիջապես նախատեսվող գործունեության ամբողջ տարածքը արտադրական տարածք է, որտեղ բացակայում է բերրի հողի շերտը, չկա հողածածկ և բուսածածկ:

Բացի դա ներկայացվող տարածքում հողերի ադոտովածությունը որոշելու համար 2023 թվականի հունիսի 12-ից հուլիսի 3-ը կատարվել է նմուշառում՝ գործունեության տարածքի մի քանի կետերից, նմուշը ընդհանրացվել է և տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա:

Աղյուսակ 3.5. Հողի անալիզների արդյունքները

h.h	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեքը
1	Լիթիում	գ/կգ	0.00308
2	Բերիլիում	գ/կգ	0.002004
3	Բոր	գ/կգ	0.0162
4	Նատրիում	գ/կգ	2.723
5	Մագնեզիում	գ/կգ	<0.01
6	Ալյումին	գ/կգ	2.408
7	Տնդհանուր ֆոսֆոր	գ/կգ	2.644
8	Կալիում	գ/կգ	25.81
9	Կալցիում	գ/կգ	0.179
10	Տիտան	գ/կգ	4.987
11	Վանադիում	գ/կգ	0.106
12	Քրոմ	գ/կգ	0.0185
13	Երկաթ	գ/կգ	8.721

h.h	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեքը
14	Մանգան	գ/կգ	0.410
15	Կոբալտ	գ/կգ	0.0139
16	Նիկել	գ/կգ	0.0407
17	Պղինձ	գ/կգ	0.0493
18	Ցինկ	գ/կգ	0.0838
19	Արսեն	գ/կգ	0.00291
20	Սելեն	գ/կգ	0.00354
21	Ստրոնտիցում	գ/կգ	0.0760
22	Մոլիբդեն	գ/կգ	0.00205
23	Կադմիում	գ/կգ	0.000183
24	Անագ	գ/կգ	0.00106
25	Ծարիր	գ/կգ	0.000301
26	Բարիում	գ/կգ	0.00570
27	Կապար	գ/կգ	0.0134
28	Բիսմութ	գ/կգ	<0.0001
29	Ուրան	գ/կգ	0.00137

Անալիզների հաշվետվությունը բերված է հավելվածների մասում:

3.6. Կենսաբազմազանություն

Վանաձոր քաղաքի ֆլորայի կազմում գերիշխող թիվ են կազմում առաջին մեծության տերևաթափ ծառերը, փշատերև ծառեր և տերևաթափ թփերը:

Տարածաշրջանի անտառածածկ մակերեսի 69%-ը տեղաբաշխված է հյուսիսային, իսկ 31%-ը հարավային դիրքադրության լանջերին:

Վանաձոր քաղաքի տարածքում հաճախ հանդիպող ծառատեսակներից են նոճազգիների ընտանիքին պատկանող թույա արևմտյանը, գիհի սովորականը, որոնք հիմնականում աճում են քաղաքի այգիներում, պուրակներում: Վանաձոր քաղաքի տարածքում սակավ հանդիպող ծառատեսակներից է սեքվոյա հսկայականը: Սոճազգիների ընտանիքից քաղաքի տարածքում սահմանափակ քանակությամբ հանդիպում է սոճի կովկասյանը, եղևնի կեռիկավոր արծաթափայլը, եղևնի սովորականը և սոճի եվրոպականը: Թխկազգիների ընտանիքից թխկի դաշտայինը հանդիպում է քաղաքի մայրուղիներում, փողոցների մայթերերին, այգիներում, պուրակներում:

Վանաձորում և հարակից անտառածածկ շրջաններում հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, գորշ գայլ, նապաստակ, աքիս, դաշտամուկ, քարաբնակ կզաքիս, գետնասկյուռ:

Թռչուններից տարածված են բաղը, գորշ կաքավը, շիկահավը, դաշտային

ճնճողները, լորը, կաքավը, անտառային արտույտը, ծիծեռնակը, կաչաղակը, արծիվը, բազեն և այլն: Սողունները զգալիորեն քիչ են:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, տարածքն ամբողջությամբ արտադրական տարածք է, ինչի պարագայում բնական բուսածածկ, հողածածկ, վայրի կենդանիներ կամ դրանց ապրելավայրեր չեն կարող լինել:

3.7. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ: Արտադրական գործունեությունը կազմակերպելու համար օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները, հետևաբար բնական լանդշաֆտների վրա հնարավոր ազդեցությունները բացակայում են:

Լեռու մարզը հարուստ է պատմության և մշակույթի հուշարձաններով: Այդ հուշարձանները ներկայացնում են տարածշրջանում հայտնի աշխարհիկ և հոգևոր գործառնություն ունեցող հուշարձանների բոլոր տեսակները: Դրանք են հնագույն բնակատեղիներ, քարեդարյան կացարաններ, միջնադարյան գյուղատեղիներ, պաշտպանական, հոգևոր, տնտեսական կառույցներ, գերեզմանոցներ, կոթողներ, խաչքարեր և այլն: Ժամանակագրական առումով նրանք ընդգրկում են վաղնջական ժամանակներից մինչև մեր ժամանակները:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման, մարզի տարածքում են գտնվում «Գյուլագարակի», «Կովկասյան մրտավարդենու» , և «Մարգահովտի» արգելավայրերը:


Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մնացորդային լճերը: Դա հնարավորություն է տալիս ապագայում ստեղծել «Լոռու լճեր» պահպանվող լանդշաֆտ:

Հարկ է նշել նաև, որ նախատեսվող գործունեության տարածքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, «Գյուլագարակի» և Կոտայքի մարզի տարածքում գտնվող «Հանքավանի» ջրաբանական արգելավայրերը գտնվում են ավելի քան 1.6 կմ հեռավորության վրա:

Ստորև ներկայացվում է հատուկ պահպանվող տարածքների սխեմատիկ քարտեզը՝

Նկար. 5

ՀՀ տարածքի ԲՀՊՏ – ըը /առկա և նախատեսվող/



3.8. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ

Բնության հուշարձանը գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտ է, որի պահպանության ռեժիմը սահմանվում է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով:

ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գտնվող բնության հուշարձանների ցանկը: Ցանկում ընդգրկված է 233 գտնվող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական բնության հուշարձաններ:

Նախատեսվող արտադրական գործունեությունը ծավալվելու է արտադրական տարածքում, որտեղ չկան պատմամշակութային կամ բնության հուշարձաններ: Այնուամենայնիվ, որպես օրենսդրական պահանջ՝ ստորև ներկայացվում է Լոռու տարածաշրջանում գրանցված բնության և պատմամշակութային հուշարձանների ցանկը:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, համաձայն որի Լոռու մարզի տարածքում հաշվառված հետևյալ բնության հուշարձաններից որևէ մեկը չի առնչվում գործունեության տարածքի հետ:

Ստորև ներկայացվում է Լոռու մարզի բնության հուշարձանների ցանկը:

Երկրաբանական հուշարձաններ

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	«Անանուն» գոլավոր դայկաներ	Լոռու մարզ, Լավվար գետի կիրճ
2	«Անանուն» դայկաների համակարգ	Լոռու մարզ, Գարգառ գյուղից 5 կմ հվ, Պուշկինի լեռնանցքի մոտ
3	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռիբերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախափին, հունից 40 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Չիչկան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
----------------	---

Կենսաբանական հուշարձաններ

«Մրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք
----------------------	-------------------------------

3. Սոցիալական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Վանաձոր վարչական տարածքում, Երևան-Վանաձոր մայրուղու Վանաձորի հյուսիս-արևմտյան մասում, Դարպաս գյուղից 690մ, Փամբակ գետից 100մ հեռավորության վրա:

3.9.1. Վանաձոր

Վանաձոր քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 76.2 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային զոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 125 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ կազմակերպություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ³:

Քաղաքում կան պատմամշակութային բազմազան նմուշներ, որոնք պահպնվում են Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանում: Այստեղ է գտնվում Ստեփան Զորյանի տուն-թանգարանը: Քաղաքում կա բուսաբանական այգի, այստեղ է նաև «Վանաձոր» առողջարանը: Գործում են հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, հիգիենիկ հակահամաճարակային տեսչության կենտրոն: Վանաձորում է գտնվում ԲՈՒ Լեռնահեծանվային պարկը, որը միակն է Հայաստանում:

3.9.2. Գյուղ Դարպաս

Մակերես՝ 19.33 կմ²

Բնակչություն՝ 1811

Դարպաս բնակավայրը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմտյան մասում, Մայմեխ լեռան (3081մ) արևմտյան կողմում, մարզկենտրոն Վանաձորից 4կմ դեպի արևմուտք: Կլիման բարեխառն է՝ ամռանը մեղմ, ձմռանը՝ ցուրտ: Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց՝ վերանորոգված, 202 աշակերտով, 39 աշխատատեղ, որից՝ 29 ուսուցիչ: Արտագաղթի պատճառով պակասում է աշակերտների թիվը:

Համայնքն ունի մանկապարտեզ՝ կրտսեր և ավագ խմբերով, որտեղ աշխատում են 11 աշխատող, 1 մշակույթի կենտրոն՝ գործում է մանկապարտեզի շենքում: Մշակույթի տանը գործում են երգի, պարի, դաշնամուրի, նկարչության խմբակներ:

Գործող գրադարանը, որը գործում է մանկապարտեզի շենքում, ունի 3243 անուն գիրք: Կա մեկ բուժ. կետ: Գյուղը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, բնական գազով, գիշերային լուսավորությամբ, գլխավոր ճանապարհը ասֆալտապատ և սալարկված է: Գյուղում գործում է կարի արտադրամաս⁴:

³ <https://www.armstat.am/>

⁴ <http://lori.mtad.am/about-communities/463/>

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Ընդհանուր տեղեկատվություն

«Վանաձորցեմենտ» ընկերությունը նախատեսում է արտադրել ցեմենտի տարբեր մակնիշներ՝ կլինկերի և այլ բաղադրիչների մեխանիկական խառնման և համասեռացման եղանակով: Կլինկերի արտադրություն չի նախատեսվում:

Արտադրությունը կկազմակերպվի Վանաձոր քաղաքի արդյունաբերական գոտում, նախկին «Ուկրշին» կազմակերպության շինանյութերի արտադրության տարածքում: «Վանաձորցեմենտ» ընկերությունը վարձակալում է տարածքում առկա շինությունները և սարքավորումները /վարձակալության վկայականի պատճենը կցվում է/:

Տարածքում առկա են բավականաչափ քանակությամբ բունկերներ, սիլոսներ, ցիկլոններ, գտիչներ և այլ արտադրական սարքավորումներ: Արտադրական հոսքագիծը համալրելու նպատակով նախատեսվում ձեռք բերել և տեղադրել 3 հատ աղաց, ռոտորային և ծնոտային ջարդիչներ: Կվերանորոգվեն շնեկները, փոխակրիչները և որոշ այլ սարքավորումներ:

Հիմնական հումքատեսակը՝ կլինկերը տեղափոխվելու է ավտոտրանսպորտային միջոցներով: Հումքի մատակարարման աղբյուրներն են.

- Արարատցեմենտ ընկերություն
- Իրանի Իսլամական հանրապետության ընկերություններ
- Վրաստանի Հանրապետության ընկերություններ

Վրաստանի Հանրապետությունից գնելու դեպքում տեխնիկապես հնարավոր է նաև օգտագործել Թբիլիսի-Երևան երկաթուղին, տեղափոխելով կլինկերը մինչև Վանաձորի երկաթգծային կայարան, որտեղ բեռնել բեռնատար մեքենաների մեջ և տեղափոխել գործարանի տարածք:

4.2. Հումքը

Հիմնական հումքատեսակներն են կլինկերը և գիպսը, ինչպես նաև հիդրավլիկ հավելանյութեր:

ա. *Կլինկեր*՝ կրաքարի, կավի և խարամի խառնուրդի թրծման արդյունքում ստացված նյութ:

Կլինկերը տարբեր չափերի բազմաթիվ բյուրեղների համակցություն է:

Կլինկերը կարող է բաղկացած լինել հետևյալ միացություններից.

- Ալյումինատ՝ 5 – 15 %,
- Ալիտ՝ 40-60%;
- Բեդիտ՝ 15-40%,

- Ալյումինիտ՝ 10-20%.

բ. *Գիպս*՝ հանքային նյութ, որը մաքուր վիճակում պարունակում է.

- 32.56% CaO,
- 46.56% SO₃
- 20.95% H₂O:

գ. *Այլ հավելվածներ*

- պլաստիֆիկատորներ,
- կատալիզատորներ,
- ծավալային ընդլայնման կարգավորիչներ,
- պուցոլանային նյութեր:

3.9. 4.3. Արտադրանք

Ցեմենտ (լատիներեն՝ caementum - խիճ, ջարդած քար), հիդրավիկական կապակցանյութերի մեծ խմբի հավաքական անվանում, կարևոր շինանյութերից: Ջրի կամ որոշ աղերի ջրային լուծույթների ազդեցությամբ ցեմենտը առաջացնում է պլաստիկ զանգված (ցեմենտախմոր), որն աստիճանաբար պնդանում է՝ առաջացնելով քարանման ամուր նյութ: Ցեմենտը հիմնականում օգտագործվում է լցանյութերի (ավազ, կոպիճ, խիճ) հետ խառնված, շինարարական շաղախների, բետոնների ձևով, վերգետնյա և ստորգետնյա կառույցների, շենքերի առանձին տարրերի ամրացման, հիդրոմեկուսացման և այլ նպատակներով:

Բնակավայրերի տարածքում ցեմենտի փոշու.

- միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան՝ 0.1 մգ/մ³,
- առավելագույն միանվազ սահմանային թույլատրելի կոնցենտրացիան՝ 0.3 մգ/մ³,
- վտանգավորության դասը՝ III:

4.4. Արտադրության կառուցվածքը

Ցեմենտի արտադրության արտադրական հանգույցներն են.

Անվանացանկ

1. Հումքի պահեստներ շվաքարանի տակ
2. Շնեկ - «Շ-1»
3. Ցիկլոններ, ֆիլտրեր - «Ց-1»
4. Մանրացնող սարք (աղաց) – «ՄՄ-1»
5. Խառնիչներ - «ԽՄ-1»
6. Ժապավենային փոխադրիչ - «ԺՓ-1»
7. Նորիա, բաշխիչ հանգույց - «ԲՀ-1»
8. Ջարդիչներ - «ՋՌ-2, ՋԱ-2»

9. Բունկերներ
10. Ցեմենտի սիլոսներ
11. Տրանսպորտի շարժման ուղղություններ
12. Ժապավենային փոխադրիչ կշեռքներ


Աղյուսակ 4.1. Օգտագործվող սարքավորումների ցանկը և բնութագրերը

Անվանում	Քանակ	Բնութագրիչներ (արտադրողականություն)	Ցուցանիշներ	Կոդ
Բունկերներ	5 հատ	60/62մ ³	5.5	-
Փոխադրիչներ ժապավենային	5 հատ	6.5/12մ	5 x 7.5	ԺՓ-1
Ջարդիչ ռոտորային	1 հատ	7.5 /8.0մ ³ /ժամ	220	ՋՌ-2
Ջարդիչ այտային	2 հատ	5.5 /6.0մ ³ /ժամ	220	ՋԱ-2
Խառնիչ	2 հատ	6.0մ ³	220	ԽՄ-1
Մանրացնող սարք (աղաց)	3 հատ	7.5 /8.0մ ³ /ժամ	55.0	ՄՄ-2
Շնեկ	2 հատ	13.0 /13.2մ ³ /ժամ	5.2	Շ-1
Նորիս	2 հատ	13.0 /14.0մ ³ /ժամ	11.0	Ն-1
Բաշխիչ հանգույց	2 հատ	13.0 /14.0մ ³ /ժամ	-	ԲՀ-1
Ցիկլոններ, ֆիլտրեր	2 հատ	30.0տ/ժամ	11.0	Ց-1

Գործարանի արտադրողականությունը կախված է պահանջարկից:

- Առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 21 տ/ժամ,
- 10 ժամ/օր աշխատանքի դեպքում՝ 210 տ/օր
- Տարեկան 330 օր աշխատանքի դեպքում՝ 69300 տ/տարի:

Գործարանի հատակագիծը՝ հանգույցների և տեղամասերի տեղադիրքերով ներկայացված են նկար 4-ում:



Նկար 4. Գլխավոր հատակագիծ


4.5. Տեխնոլոգիական գործընթացները

Կլինիկերը կոնստեյներներով կամ բեռնատարներով տեղափոխվում է գործարանի տարածք և պահեստավորվում բունկերների (1) մեջ: Ընդամենը տեղադրված են 5 բունկերներ, որոնցից երեքը կլինիկերի, մեկը գիպսի և մեկը հավելանյութերի համար: Գիպսը և այլ նյութերը տեղափոխվում են պարկերով կամ բեռնատարներով:

Բունկերների ստորին մասում տեղադրված է կշեռք-փոխակրիչ (2): Յուրաքանչյուր բունկերի համար տեղադրված է չափիչ-տարողություն: Ըստ տվյալ տեսակի ցեմենտի բաղադրության կշռվում են կլինիկերի, գիպսի և հավելանյութերի համապատասխան քանակներ և կշեռք-փոխակրիչը դրանք տեղափոխում է խառնման բունկեր (3): Ելնելով ցեմենտի տեսակից /մարկա/ կլինիկերի պարունակությունը կարող է տատանվել 60 – 90 % սահմաններում:

Բունկերից խառնուրդը ինքնահոս տրվում է սկզբից ռոտորային ջարդիչ (4), որից հետո ծնոտային ջարդիչ (5) և մանրացված զանգվածը ժապավենային փոխակրիչի միջոցով (6) տեղափոխվում է խառնիչ (7): Խառնիչը փակ տարողություն է, որը կահավորված է թիակներով: Համասեռացված ցեմենտային խառնուրդը հոսում է աղաց (8), որտեղ վերջնականապես ցեմենտը մանրացվում է մինչև փոշենման վիճակի, որից հետո շնեկի միջոցով (10) պատրաստի արտադրանքը լցվում է սիլոսների (9) մեջ: Տարածքում առկա են 12 սիլոս: Յուրաքանչյուր սիլոսը նախատեսված է ցեմենտի որոշակի տեսակի համար: Սիլոսներից ցեմենտը տրվում է առաքիչների բեռնատար մեքենաների մեջ, կամ տարավորվում պարկերի մեջ:

Հիմնական փոշեառաջացման հանգույցը՝ ջարդիչների, խառնման բունկերի և աղացի հոսքագիծը կահավորված է փոշեկլանման համակարգով: Համակարգը բաղկացած է երկու ցիկլոններից (11) և երկու թևքային գոտիներից (12): Մաքրված գազային խառնուրդը օդամղիչի (13) միջոցով արտանետում է մթնոլոր 0.12 մ տրամագծով և 20 մ բարձրությամբ խողովակով (14):



Նկար 5. Արտադրության տեխնոլոգիական սխեման

Աղյուսակ 4.2. Սարքերի և սարքավորումների մասնագիր

Համարն ըստ սխեմայի	Սարքավորումների անվանումը	Քանակը, հատ
1 ₁ – 1 ₅	Հումքի ընդունման բունկերներ	5
2	Կշեռք – փոխակրիչ	1
3	Միջանկյալ բունկեր	1
4	Ռոտորային ջարդիչ	1
5	Շնոտային ջարդիչ	1
6	Ժապավենային փոխակրիչ	1
7	Խառնիչ	1
8	Աղաց	1
9 ₁ – 9 ₁₂	Ցեմենտի պահեստավորման սիլոսներ	12
10	Շնեկ	1
11	Ցիկլոններ	2
12	Թևքային գտիչներ	2
13	Օդամղիչ	1
14	Արտանետման խողովակ	1

4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

5.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ նշված գործունեությունը չի իրականացվում, որևէ փոփոխություն չըջակա միջավայրում տեղի չի ունենում: Այս դեպքում՝

- բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաձին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- չի ներդրվի ժամանակակից տեխնոլոգիական արտադրություն և չեն կատարվի համապատասխան հարկային վճարումներ,
- չի ստեղծվի հնարավորություն այս գործունեությամբ նախատեսված բարձրարժեք հումքի հիման վրա կազմակերպել այլ արտադրություններ:

4.8. 5.2. Քննարկվող տարբերակներ

«Վանաձորցեմենտ» ընկերությունը հիմնվել է հատուկ նպատակով՝ ցեմենտի արտադրություն, ուստի դիտարկվել են ցեմենտի արտադրության տարբեր եղանակներ:

Դիտարկվել են ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Ցեմենտը արտադրել հանքաքարից: Այս եղանակի հիմնական առավելությունը կապիտալ ցածր ծախսայնությունն է:

- Հումքի աղբյուրների առկայությունը Հայաստանի Հանրապետությունում և մատակարարման կայունությունը

Տարբերակի թերությունները՝

- Հանքաքարի վերամշակումը կապված է զգալիորեն ավելի մեծ բնապահպանական ռիսկերի հետ, մասնավորապես՝ վնասակար նյութերի արտանետումների:

Բ. Ցեմենտի արտադրության համար որպես հումք օգտագործվում է պատրաստի կլիներ:

Այս տարբերակի առավելություններն են.

- արտադրական գործընթացում բացակայում է հանքանյութի թրծման անհրաժեշտությունը և լրացուցիչ մաքրման անհրաժեշտությունը

- հումքի ծավալները ավելի փոքր են և տեղափոխման ծախսերը ավելի նվազ:

Տարբերակի թերությունները՝

- ցածր եկամտաբերությունը:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, առաջին հերթին բնապահպանական գործոնները, ընտրվել է երկրորդ տարբերակը:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Օդային ավազան

6.1.1. Արտանետումների քանակները

Ընտրված եղանակով ցեմենտի արտադրության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է անօրգանական փոշիների արտանետումներով:

Արտանետումներ կարող են առաջանալ հումքի բեռնաթափման, հումքատեսակների մանրացման, խառնման և տարավորման ժամանակ:

ա. Հումքը գործարանի տարածք է տեղափոխվում բեռնատար մեքենաներով և բեռնաթափվում 5 բունկերների մեջ: Բունկերները փակ տեսակի են:

Արտանետումներ կառաջան բեռնաթափման ընթացքում և կհաշվարկվեն համաձայն «Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов», г.Новороссийск».

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ (բանաձև 1), որտեղ}$$

Ցուցանիշները և գործակիցները վերցվել են կլիմայի համար:

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է կլիմայի համար, 0.01 (աղյուսակ 1)

P_2 – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.003

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.8 (հաշվի առնելով հումքի խոնավությունը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5 (միջինացված կլիմայի համար)

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.4

G – բեռնաթափվող հումքի քանակը՝ տարեկան առավելագույն 69300 տ, Բեռնաթափումը կատարվում է շաբաթվա 5 օր, օրական 4 ժամ՝
 $69300 \text{ տ/տարի} : 260 \text{ օր/տարի} : 4 \text{ ժամ/օր} = 66.6 \text{ տ/ժամ}$

$$Q_1 = (0.01 \times 0.003 \times 1.0 \times 0.8 \times 0.5 \times 66.6 \times 10^6 \times 0.4 \times 1.0) / 3600 = 0.089 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների տարեկան քանակը արդյունքում կկազմի.

$$0.089 \text{ գ/վրկ} \times 260 \text{ օր/տարի} \times 4 \text{ ժամ/օր} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 10^6 \text{ գ/տ} = 0.333 \text{ տ/տարի:}$$

բ. Հիմնական տեխնոլոգիական գործընթացները տեղի են ունենում երկու ջարդիչներում և երեք աղացներում: Հումքի խառնումը, մանրացումը և համասեռացումը իրականացվում է տարեկան 330 օր, 10 ժամ/օր, ընդամենը 3300 ժամ/տարի:

Ըստ «Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986» մեթոդակարգի ջարդիչների և աղացների աշխատանքի ժամանակ արտազատվող օդային զանգվածը յուրաքանչյուր միավորից կազմում է 0.1 մ³/կգ վերամշակվող/մանրացվող զանգված, օդային զանգվածում փոշու պարունակությունը՝ 20 գ/մ³, այստեղից փոշու արտանետումը կկազմի՝

$$- 69300 \text{ տ/տարի} \times (0.1 \text{ մ}^3/\text{կգ} \times 10^3 \text{ կգ/տ} \times 20 \text{ գ/մ}^3) \times 3 : 10^6 \text{ գ/տ} = 415.8 \text{ տ/տարի,}$$

որտեղ 3՝ սարքավորումների թիվն է (երկու ջարդիչ, մեկ աղաց):

Տեխնոլոգիական հոսքագիծը կահավորված է փոշեկլանման հանգույցով, որը բաղկացած է երկու ցիկլոնների և երկու թևքային գոտիչների հանգույցներից: Մաքրման համակարգի առանձին մասերի արդյունավետությունը կազմում է.

- Ցիկլոններ՝ 70 – 80%%, հաշվարկների համար ընդունվում է նվազագույն՝ 70%
- Թևքային գոտիչներ՝ 97 – 98 %%, ընդունվում է՝ 97 %:
- Ընդամենը փոշու կլանումը կկազմի՝

$$415.8 \text{ տ/տարի} \times (1 - 0.97) \times (1 - 0.7) = 3.74$$

$$\text{Վարկյանում՝ } 3.74 \text{ տ/տարի} \times 10^6 \text{ գ/տ} : 3300 \text{ ժամ/տարի} : 3600 \text{ վրկ/ժամ} = 0.315 \text{ գ/վրկ:}$$

գ. Պատրաստի արտադրանքի փաթեթավորման և բեռնատարների մեջ բեռնման ընթացքում առաջանալու են փոշու արտանետումներ, որոնք հաշվարկվելու «Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов», г.Новороссийск» մեթոդակարգի վերը բերված եղանակով:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ (բանաձև 1), որտեղ}$$

Ցուցանիշները և գործակիցները վերցվել են ցեմենտի համար:

P₁ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է կլինկերում, 0.04 (աղյուսակ 1)

P₂ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.03

P₃ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի

գոտում քանու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 1.0

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 1.0

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 0.01

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.4

G – բեռնաթափվող հումքի քանակը՝ տարեկան առավելագույն 69300 տ,

Տարավորումը կատարվում է տարեկան 3300 ժամ/տարի՝

69300 տ/տարի : 3300 ժամ/տարի = 21 տ/ժամ

$Q_1 = (0.04 \times 0.03 \times 1.0 \times 1.0 \times 1.0 \times 21 \times 10^6 \times 0.01 \times 0.4) / 3600 = 0.028$ գ/վրկ:

Արտանետումների տարեկան քանակը արդյունքում կկազմի.

0.028 գ/վրկ \times 3300 ժամ/օր \times 3600 վրկ/ժամ : 10^6 գ/տ = 0.332 տ/տարի:

Աղյուսակ 6.1-ում բերված են արտանետումների աղբյուրների բնութագրերը և արտանետումների քանակները:

Աղյուսակ 6.1. Արտանետումների աղբյուրի բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտանետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Հումքի տեղամաս	Բունկերներ	5	Հարթակ	1	6	12	2	18
Ցեմենտի արտադրության հոսքագիծ	Ջարդիչ Աղաց	2 1	Խողովակ	2	20	0.2	12	18
Արտադրանքի տարավորում	Սիլոսներ	12	Հարթակ	3	2	18	2	18

Աղյուսակ 6.1-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերի Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման նվազագույն աստիճանը Մաքրման առավել-չափը, %	Աղբյուրի կոորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
		X ₁	X ₂	Y ₁	Y ₂		գ/վրկ	տ/տարի
1 0	1 1	1 2	1 3	1 4	1 5	1 6	1 7	1 8
-	-	98	110	56	64	❖ Ցեմենտի փոշի	0.089	0.333
100	0.99/0.992	48	55	-	-	❖ Ցեմենտի փոշի	0.315	3.74
-	-	44	64	32	36	❖ Ցեմենտի փոշի	0.028	0.332

6.1.2. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» համակարգչային ծրագրով, 6.1-րդ աղյուսակում բերված տվյալների հիման վրա:

Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը ցեմենտի փոշու համար գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում:

Առավելագույն կոնցենտրացիան կազմում է 0.18856 ՍԹԿ մասով (թույլատրելի նորմի 18.8 %) կամ 0.05657 մգ/մ³:

6.1.3. Սանիտարապաշտպանիչ գոտի

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են CH 245 – 71 ստանդարտով: Ըստ այդ փաստաթղթի մինչև 150000 տ/տարի ցեմենտի արտադրությունների համար սանիտարապաշտպանիչ գոտին սահմանված է 500 մ: Ինչպես վերը նշվել է ցեմենտի գործարանը գտնվում է Վանաձոր քաղաքի արտադրական գոտում, շրջապատված է այլ արտադրական տարածքներով: Մոտակա բնակելի թաղամասը՝ Դարպաս գյուղի տները, գտնվում է 690 մ հեռավորության վրա:

6.2. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության համար ջուր չի նախատեսվում և համապատասխանաբար արտադրական արտահոսք նույնպես չի լինի:

Տարածքում ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար: Ջուրը բերվելու է ջրատար մեքենաներով և պահեստավորվելու է տարածքում առկա տարողություններում: Գործարանի շահագործումը նախատեսվում է իրականացնել 20 – 25 աշխատողների միջոցով: Առավելագույն արտադրողականության դեպքում այդ թիվը կարող է հասնել մինչև 45 հոգի:

Խմելու-տնտեսական կարիքներ

Ջրապահանջը հաշվարկվում է համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$$W_{\text{ju.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T, \text{ որտեղ}$$

n_1 – ԻՏՍ թվաքանակն է՝ 12 մարդ

N_1 – ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_2 – բանվորների թվաքանակն է՝ 33 մարդ

N – ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շինընթացքում՝ 330 օր

$$W_{\text{ju.}} = (12 \times 0.016 + 33 \times 0.025) \times 330 = 335.6 \text{ մ}^3/\text{տարի:}$$

Օրական՝ 1.017 մ³/օր:

Կենցաղային կեղտաջրեր

Ինչպես նշվել է, գործարանում արտադրական արտահոսք չի առաջանում, կենցաղային կեղտաջրերի ծավալը կկազմի՝

$$335.6 \text{ մ}^3/\text{տարի} \times (1 - 0.05) = 318.8 \text{ մ}^3/\text{տարի}, \text{ որտեղ՝ } 0.5 \text{ կորստի գործակիցն է:}$$

Միջին օրական՝ 0.97 մ³/օր:

Սկզբնական փուլում կեղտաջրերի հավաքման համար կօգտագործվի տարածքում առկա կեղտաջրերի հավաքման հորը: Հետագայում նախատեսվում է տեղադրել բիոգուգարաններ:

6.3. Թափոններ

Ցեմենտի արտադրության նախատեսվող տեխնոլոգիան թույլ է տալիս կազմակերպել անթափոն արտադրություն, քանի որ բոլոր ավելցուկները, կամ կարծրացած կտորները նորից խառնվում է հումքի հետ և տրվում ջարդիչներ ու հետո աղացներ:

Գործարանում առաջանում է միայն կենցաղային թափոն:

Այս թափոնը ՀՀ բնապահպանության /շրջակա միջավայրի/ նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում համապատասխանում է 9120040001004 ծածկագրի տակ՝ «Կազմակերպությունների տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)» թափոնատեսակին:

Տարեկան նախատեսվող ծավալը՝ 14.4 մ³:

Կենցաղային աղբը Վանաձոր քաղաքի աղբահանությամբ զբաղվող ընկերությունների միջոցով կտեղափոխվի Վանաձորի քաղաքային աղբավայր:

Համապատասխան պայմանագիր կկնքվի դրական փորձաքննական եզարակացության դեպքում:

6.4. Աղմուկ և վիբրացիա

«Վանաձորցեմենտ» ընկերության ցեմենտի գործարանում վիբրացիայի աղբյուրներ չկան:

Աղմուկի աղբյուր կարելի է համարել փոխակրիչները, շնեկը և ջարդիչները: Սակայն այդ բոլոր սարքավորումների աղմուկի մակարդակը չի գերազանցում ՀՀ-ում գործող սանիտարական նորմերը աշխատատեղերի համար՝ 80 դԲա:

6.5. Առողջապահական գործոնների վերլուծությունը

Ներկայացվող գործունեության հիմնական ազդեցությունը մարդու առողջության վրա պայմանավորված է հետևյալ գործոններով.

- *Վնասակար նյութերի արտանետումներ:* ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում իրականացված վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակավայրերի համար հաստատված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների /ՍԹԿ/ սահմաններում, հաշվի առնելով նաև ֆոնային աղտոտվածության ցուցանիշները:

- Գործարանում *արտադրական հոսքաջրեր* չեն առաջանում:

- Աղմուկի մարարդակը արտադրական շինության մեջ նախատեսվում է 55 – 60 դԲա, շինությունից դուրս չի գերազանցի 50 դԲա: Հարկ է նշել, որ աշխատանքային տեղերի համար ՀՀ-ում գործող նորմը կազմում է 80 դԲա, բնակելի և հասարակական վայրերում՝ ցերեկային ժամերին 55 դԲա, գիշերային՝ 45 դԲա:

- Գործարանում չկան վիբրացիա առաջացնող սարքավորումներ:

- Գործարանում առաջանում են արտադրական III և IV դասի թափոններ, որոնց հետ անձնակազմը անմիջական շփում չունի՝ խարամը բարձիչի միջոցով բարձվում է կոնտեյներների մեջ, իսկ որսված փոշին ինքնահոս լցվում պարկերի մեջ:

Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները կհամապատասխանեն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի պահանջներին

6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից նախատեսվող գործարանի շրջանում հիմնական աղտոտման աղբյուր են հանդիսանում ասֆալտի գործարանը և տրանսպորտային միջոցները:

Հաշվի առնելով ազդեցության բնույթի էական տարբերությունը, զգալի հավաքական ազդեցություն չի նախատեսվում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

